Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2022 թվականի N - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 318 քաղաքացու, որոնցից

210–ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 10-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 98-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 79 պահեստազորային, որոնցից՝ 9 պահեստազորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 22 - 28-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 1 - 7-ը ներառյալ, 34 պահեստազորային՝ 2022 թվականի նոյեմբերի 8 - 17-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2022 թվականի նոյեմբերի 15 - 24-ը ներառյալ,

2) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 16 պահեստազորային՝ 2022 թվականի նոյեմբերի 14 - 23-ը ներառյալ,

3) կապի մասնագիտություններով մինչև 71 պահեստազորային, որոնցից՝ 66 պահեստազորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 3 - 12-ը ներառյալ, 5 պահեստազորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 9-ը ներառյալ,

4) հետախուզական մասնագիտություններով մինչև 26 պահեստազորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 19 - 28-ը ներառյալ,

5) անօդաչու թռչող սարքերի մասնագիտություններով մինչև 40 պահեստազորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 7-ը ներառյալ,

6) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով մինչև 17 պահեստազորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 17 - 26-ը ներառյալ,

7) տեխնիկական մասնագիտություններով մինչև 11 պահեստազորային՝ 2022 թվականի նոյեմբերի 14 - 23-ը ներառյալ,

8) թիկունքային մասնագիտություններով մինչև 44 պահեստազորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 1 - 7-ը ներառյալ,

9) տեղագրական մասնագիտություններով մինչև 14 պահեստազորային՝ 2022 թվականի նոյեմբերի 21 - 30-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան